«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2017 թվականի

Լսելով և քննարկելով **«Տեսական դասընթացն ավարտած, սակայն ամփոփիչ ատեստավորման ժամանակ անբավարար ստացած կամ չներկայացած բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների կրկնակի ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզը ղեկավարելու և գրախոսելու համար ժամավճար նախատեսելու մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տեսական դասընթացն ավարտած, սակայն ամփոփիչ ատեստավորման ժամանակ անբավարար ստացած կամ չներկայացած բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների կրկնակի ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզը ղեկավարելու և գրախոսելու համար ժամավճար նախատեսել համալսարանում գործող նորմաներով՝
   1) ավարտական աշխատանքի համար՝ 20+5=25 ժամ,
   2) մագիստրոսական թեզի համար՝ 25+8=33 ժամ:

2. Ավարտական կուրսի առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով համալսարանից անբավարար առաջադիմության պատճառով հեռացված կամ տեսական դասընթացը չավարտած ուսանողների ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի ղեկավարման համար ժամավճար չի նախատեսվում:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսում-նամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

15.02.2017 թ.